



ՇԱՐԿԱԿԱՆ ԱՉԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
Կը Հրատարակուի Եւ Շաբաթ օրեր,
ՏԻԳՐԻՍ Հրատարակչական Ընկերութեան կողմանէ:
Յ. ՂՈՒՄՐԻԿԵԱՆ, ԳԱՆՁԱՊԵՏ.
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԻՍՏԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՅ ՈՒ — ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ
ՔԱՆԱՏԱՅԻ ՉԱՄԱՐ
ՉԱՄԱՐ

Table with 2 columns: Subscription rates and terms. Includes 'Տարեկան 1 50', 'Վեցամսեայ 75', 'Եռամսեայ 40' and 'Տարեկան 10 ֆրանք'.

Մտար կամ նամակ ուղղել Հետեւեալ Հասցէին՝
To the DICKRIS PUBLISHING CO., 628 Third Ave., New York City

Entered at the Post Office at New York as Second-Class Mail Matter.

ՆՈՒ ԵՆՈՐՔ, ՇԱՐԿԱԿԱՆ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 17 1898.

ՍԱՐԱՃԵԱՆ ՅՈՎՍԷՓ ԵՊԻՍԿՈՊՈՍ — Արմէնիաի մէջ
կը կարգանք. «Յայտնի է որ Ամերիկայի Հայ գաղութը
վերջերս այնչափ բազմացած է որ Ամերիայի Հայոց Վեհ-
կաթողիկոսն արժանի համարեց առաջնորդական վիճակ մը
ընել Ամերիկան և այդ նորակազմ առաջնորդական վիճակ-
կի վրայ առաջին եպիսկոպոս ձեռնադրուեցաւ Գեր. Սարա-
ճեան: . . . Սարաճեան Սրբազան որ Վեհ. Հայրիկի հրամա-
նին և Ամերիկայի Հայ ժողովուրդի բազմաթիւ համեմատ
Էջմիածնէն ճանաչուաւ եւ Եր արդէն իր նոր պաշտօնասե-
ղին երթալու, երկու օր առաջ Հասաւ Մարսէլ . . . Վեհ.
Կաթողիկոսի հրամանին համեմատ, Գեր. Սարաճեան մի
քանի օր ալ Փարիզի, Լիւստոնի և Մանչէսթըրի Հայ գա-
ղութներին մէջ անցունելով՝ Հոգեւորապէս պիտի մխի-
թարէ վանսնք և Մանչէսթըրի եկեղեցիին մէջ մի ձեռ-
նարկութիւն ալ կատարելէ յետոյ պիտի անցնի երթալ իր
առաջնորդական թեմը ուր ժողովուրդն կարօտալիք կը
սպասէ նորին Սրբազնութեան գալտեան:»

Նախ այս մասին հարկ է ըսել թէ Ամերիկայի Հայ ժողո-
վուրդը, հակառակ Արմէնիաի հաղորդած մի քանի լու-
րերուն, Սարաճեան Սրբազանը բնաւ առաջնորդ խնդրած
չէ նոր աշխարհի համար, այլ բնականապէս երբ Հայրիկ
անցեալներն այս մասին Նիւ Եորքի, Փրովիտէնսի և Ու-
թըրի Հայոց կամքը հասկնալ ուզեց, քաղաքի ժողովուրդը
Ո՞ր պատասխանեց իրեն. Փրովիտէնսը Չ'ի ըսաւ. քնդ-
հանուր ժողովուրդը ուրիշ կեդրոններու մէջ Ո՞ր պատաս-
խանեց, մամուլը նոյնպէս բացասական չեղանք. իսկ Ութըրի
800 ժողովուրդէն 40 անձինք միայն այժմ ըսին: Այս
ամեն բացասական արտայայտութիւնք ովկիանէն անցնելով
կը թուի թէ տարբեր գոյն կառնեն ու Էջմիածնի մէջ մո-
գական զօրութեամբ հաստատականի կը փոխուին, անանկ
որ երբ Արմէնիայի կը հասնին՝ ոսկեզօծեալ պատմութեան-
ներով կը ներկայանան հառարակութեան—«Ուր (յԱմերիկայ)
ժողովուրդը կարօտալիք կսպասէ նորին Սրբազնութեան
(Սարաճեան Սրբազանին):»

Չարմանալի չէ այս, վասնզի հիմայ ամեն բան տար-
բեր իշանակութիւն ունի վեհարանին մէջ. ժողովուրդի
ձայնը խղճուած է Հոն. դրամին ձայնը—ազգի դրամին
ձայնը ամենէն բարձր կը հնչէ: Եւ ինչ ըսենք այն հօր
որ իւր զաւակին հացի տեղ քար կուտայ, ձուկի տեղ՝ օձ:
Մենք կարող եկեղեցական մը ուզեցինք որ կարողա-
նար հովուել այս կարեւոր վիճակը. Հայրիկ մեզ քանի
մը ապիկար վարդապետներ առաջարկեց—իբրև թէ Հոս
եղածները բաւական չըլլային— խոտտանալով անոնցմէ
մին եպիսկոպոս ձեռնադրելով Ամերիկայ զրկել: Մեր-
ժուեցան ասանք, զի ժողովուրդը քաջ գիտէր թէ եպիսկո-
պոսութիւնը նոր մարդ չէր ստեղծեր ապիկար անձի մը մը
մէջ: Հայրիկ Ամերիկայի այս «պէլայէն» ազատելու հա-
մար Սարաճեան վարդապետն ընտրեց. մենք չընդունե-
ցինք. բայց որո՞ւ հոգ. Սարաճեան Սրբազան եպիսկոպոս
մէջ այժմ, և կուգայ քիչ օրէն. կամայ ակամայ ընդունելու
չենք զայն . . . : Պատասխանը ընթերցողին կը թողուք:

Մեր նպատակը չէ այս յօդուածին մէջ «ուզան չու-
զան» Սրբազանին վրայ յարձակումներ ընել. Սարաճեան
Սրբազան բողոքովն անկարող մարդ չէ. զայն մտէն,
խիտ մտէն ճանչնալու բարեբաղդութիւնը ունինք. ու-
նի նա իր արժանիքն, ու պղտիկ թեմի մը մէջ թեքեալ
կարողանայ հրաշքներ գործել. բայց Հոս, այս բազմահոգ
ժողովուրդի մէջ, գործելու կարողութիւնը չունի երբէք:
Եւ երբ կը մտարեանք թէ Սարաճեան Սրբազանը ճամբայ
կը կուգայ, հակառակ ժողովուրդի կամքին, չենք կրնար
չը գուշակել շատ մը նորանոր խռովութիւններ ու պա-
սակոտմներ ժողովուրդին մէջ: Արդեօք բաւական չէ՞ին
մեր կղերի հին կռիւներն . . . :

Ի սէր Աստուծոյ և ի սէր ժողովուրդին, Սրբազան Հայր,
եթէ այս տողերը ձեզ հասնին ժամանակին, առանց ով-
կիանն անցնելու Վեհ. Հայրիկին վերադարձէ՛ք:

ՈՒՍԹՐԻ ԳՐԱԿԱՆԱՐԱՆԸ. — Անցեալ շաբաթու Ութըրի
Գրադարանի Միութիւնն նոր վարչութիւն մը պիտի ընտրէր
յառաջիկայ տարեշրջանի համար. որոշեալ ժամուն ըեկե-
րութեան 150 անդամներէն «քանի մը պարտաճանաչ ան-
ձինք միայն» ներկայ կը գտնուին, ու բնականաբար ժողով
անգամ չի բացուիր, այլ կորոշուի մասնաւոր նամակնե-
րով անդամներուն ուշադրութիւնը հրաւիրել Միութեան
ներկայ լքեալ վիճակին վրայ, ու խնդրել որ աշխատին ներ-
կայ գտնուել վաղուան ժողովին՝ իրենց պարտականութիւնն
կատարելու համար: Այս դէպք նոր ապացոյց մէջ թէ Ու-
թըրի Հայք որ աստիճան երեսէ ձգած են իրենց ազգային
լուսոյ այդ վառարան, որ ներկայ վարչութեան օրով երեսի
վրայ թողուած ու խախտած է քիչ շատ:

Ս. Փրկիչ եկեղեցւոյ շէնքին տակ պատասպան գտնող
այս Գրադարանը, որ իր քոյր հաստատութեանց մէջ ամե-
նէն երջանիկն ու բազումներն կրնայ նկատուիլ, ազգային
միւս բոլոր գրադարաններէ աւելի արդիւնք ու պտուղ
տալու էր ժողովուրդին, այլ ընդհակառակը կը ցուինք տեսնել
թէ անտարբերութեան շնորհիւ խոչնդու զաւտ մը թողու-
ցած է իր ետև ծաղկազարդ ազգային բուրասանի մը տեղ:
Յանուն ազգայնութեան կոչում կընենք մեր Ութը-
րի Հայրենակցաց թօթափել այս անտարբերութեան մրա-
փը, ու զենք ամերիկեան Հայ գրադարաններու թագուհին
այնպիսի դիրքի մը մէջ, որ կարենայ իր բարձրութեանն լոյս
սփռել ո՛չ միայն Ութըրի այլ և ուրիշ Հայ գաղութներու:

Ո՞վ ՊԻՏԻ ԲՈՒՆԷ ԿԱՏՈՒՆ. — Հրանդ-Արփիար խնդրոյն
թեր ու դէմ քանի մը նամակներ ստացած ենք վերջերս, որք
չատ անգամ ըսուած ու գրուածներուն կրկնութիւններն
կրնան սեպուիլ: Այս թղթակցութիւններ չի պիտի կրնանք
հրատարակել, վասն զի ո՛չ միայն բուն խնդրոյն վրայ լոյս
մը չեն սփռեր, այլ աւելի կը կնճռոտեն զայն. և այսպիսի
խնդիրներ «ըսի ըսաւ» ով չեն լուծուիր յաւիտեան:

Արփիար ամբաստանուեցաւ, ու պատուոյ ատենի մը առ-
ջև դատուիլ պահանջեց. փոխանակ դատասանի՝ լրագրի-
ներն իրար անցան. շատեր հրապարակաւ սկսեցին իրար բը-
զը կտել, ու խնդրել երթալով դժուարացաւ ու նորանոր
վիճարանութեանց դուռ բացաւ:

Ամբաստանեալն ու իր կուսակիցք կը պնդէին թէ Դաշ-
նակցականք իսոյ կուսային պատուի ատենին առջև ել-
նելէ-բան մը որ արդարեւ զարմանալի կը թուէր: Այժմ իր
կուսակցութեան մէջ ազդեցիկ ու իրազէի «Դաշնակցական
մը» հարցուց սակայն հրապարակաւ թէ երբ կազմուեցաւ
ատենան ու խոյս տուին ամբաստանողը: Յօդուածագիրն
ըսել կուզէր թէ Դաշնակցականք պատրաստ էին իրենց
ամբաստանութիւնն հաստատել: Արդ իրաց այս վիճակին
մէջ վիճարանութեան պէտք չի մնար: Խնդրել լուծելու
միակ ճամբան պատուոյ ատենան է: Բայց ո՞վ պիտի կազմէ
ատենանը—ո՞վ պիտի բռնէ կատուն. . . :

Կուսակցութեանց ձեռնհաս մարմիններուն անկ է խոր-
հիլ ու կարգադրութիւն մը ընել այս մասին: Հայ մամ-
ուլոյն ու ժողովուրդին կը մնայ, փոխանակ վիճարանութեան,
ատենան պահանջել շարունակ:

Ազգի ծոցին մէջ զաւանձան մը պահելն այնքան վտան-
գաւոր է որքան ֆիասակար է զրպարտչներ ունենալ: Եւ
ազգին շահը կը պահանջէ յանձնաւոր գտնել:

Բայց ո՞վ պիտի առնէ առաջին քայլը. ո՞վ պիտի բռնէ
կատուն, և ո՞վ անոր վզէն բոժոժներ պիտի կտնէ:

ԱՉԳԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄ Ի ՈՒԷՍԹ ՀՊՊՕԲԸՆ — Ուրախ
ենք Հոս արձանագրել թէ ձեզ զիլ բարձանց վրայ բնա-
կող մեր Հայրենակիցք՝ երկարատեւ թմրութեան մը սթա-
փած, գովելի փութաշնորհութիւն մը ցոյց կուտան: Այն
ազգային լրարանը որ ամառուընէ առաջ դադարեց էր, վաղ-
ուընէ սկսեալ կը բացուի նորէն, ուր տեղւոյն երիտասարդ-
ութիւնը առիթ պիտի ունենայ կիրակէ օրերն լսել, երգել
ու սորլիլ: Տեղւոյն երիտասարդութիւնը մի ուրիշ գովելի
քայլ ևս առած է այս շաբթու: Աստիճ սեփական գիշեր-
ային վարժարան մը բացած են՝ անդկիրեհն ուսանիլ փա-
կաքողներուն դիւրութիւն ընծայելու համար: Վարժարա-
նի դասատուն կը ծանուցանէ թէ իր առաջին դասախօս-
ութեան 25ի չափ աշակերտներ ունեցած է, որոց թիւը օրէ
օր աւելնելու վրայ է եղեր:

Հայկական եկեղեցիք մը կառուցանող յանձնախումբն ալ
գործի սկսած է նորէն, զի այս օրեր սեփական շէնքի մը
պէտքը, ազգային և բարոյական տեսակէտէ նայնով, աւե-
լի և աւելի զգալի դարձած է ի Ութըրի Հոյակալներն:

Այս պատէհ առթիւ հարկ կը համարենք յիշեցնել թէ
«Կիրակի օրեր տեղւոյն շօլը չի օնացող, այլ ճաշա-
րանի անկիւնն ամփոփուած՝ երգի տեղ խաղ ու Աւետա-
րանի տեղ պիտի մատակարարող» երիտասարդներու գոր-
ծեր չեն ասոնք: Այս օրինակ անգուց զարմաստանութիւն-
ներ ընող աւետարանի չի մը ասկէ աւելի գործնա-
կան պատասխան ոչ ոք կրնար տալ: Սակայն յաջողութիւնը
չարուեստութեան ու յարատեւութեան մէջ է, բարեկամներ.
չարուեստներէ՛ք ձեր այժմեան ուղին, և վստահ եղի՛ք թէ
ձեր յառաջիկութեան ու զարգացման վճիռ Հայրիկին
մէջ ձեզ ամբաստանողն իր երեսի իրական գոյնը պիտի
տեսնէ և ամչնայ:

ԻՍՐԱԵԼԻ ՎԵՐԱՇՆՈՒԹԻՒՆԸ

Արրահամու զաւակներն ալ չու-
տով կը հասնին իրենց իտէպոլին:

Մօսկու Մեծիմաստ կուգայ. չէ՛,
դարուս իսրայէլացիները երրորդ ապ-
րողներ չեն: Ափրիկէի եզերքներէն
մինչև Գալիֆօրնիա Հրէայնեքը հի-
մակ երկնային թագաւորի մը և թա-
գաւորութեան մը զաւուստին չէ որ
ակնապիշ կ'սպասեն: Երկրագնդի վը-
րայ սփռուող այս թափառական ու
ներկային մէջ անհայրենիք ժողովուր-
դը հզօր ճիգեր կը թափէ, անհաշիւ
զսոցողութիւններ կ'ընէ, որպէս զի
ինքն ալ իր Հնազոյն ազգ մը՝ կազ-
մակերպուի կրկին և տիրանայ իւր
դատուածատուր հայրենիքին:

Առաջ Պաղեստինը և ինքնակա-
ռավարութիւն մը, յետոյ արքայու-
թիւնը և Մեծիմաստ Ահա հիմակուայ
իսրայէլացիին բողձանքը: Եւ այս
բողձանքը շատ զօրաւոր կերպով
արտայայտուեցաւ անցեալները Պա-
ղիլի Սիօնի ընկերութեան համաժո-
ղովին մէջ, ուր տեղ ներկայ էին
Մաքս Նարուտէն սկսեալ մինչև լուց-
կիալաճառ հրէայն:

Առևտուրի մէջ դրական, գործ-
նական և ճարտիկ այս ժողովուրդը՝
ազգային մեծ գործին մէջ ալ որո-
ւակէս և ազգուսպէս ցոյց տուաւ
իւր դրական օգէնը. Հայրենիքի մը
փրկութեան ամենամեծ ու ամենա-
զբժուար գործին մէջ պէտք է ընդ-
հանուր միութիւն և անխնայ նըւ-
թական զոհողութիւն: Ուստի Ափրի-
կէի, Ասիայի, Եւրոպայի, Ամերիկա-
յի և Աւստրալիայի հրէայնեքը միա-
ցած են. Պաղիլի ժողովին վերջ՝ Սի-
նակօղի մը մէջ Արևելքէն, Արևմուտ-
քէն, Հիւսիսէն ու հարաւէն եկող
հրէայնեքը բովէ քով աղօթեցին Ար-
րահամու լեզուով ու խնդրեցին մէկ
բան . . . Պաղեստինը:

Եւ մեծահարուստ պանքէր Հը-
րէայնեքն ալ կազմեցին ընկերութիւն
մը, որուն անմիջական նշխար դար-
մազուրին է \$ 10,000,000, որն պիտի
գործածուի Պաղեստինի գնումին հա-
մար՝ եթէ կարելի է, իսկ եթէ ո՛չ
դրամը պիտի գործածուի օր մը՝ ու-
րիշ միջոցներով իսրայէլին կրկին
տալու համար իւր հայրենիքը:

Միութիւն ու դրամ ունի հրէ-
այն, տարակոյս չը կայ որ ան վաղը
տէրը կ'ըլլայ իւր հայրենիքին, իսկ
մենք կը թաղուինք օրէ օր աղտոտ
կուրծներու, վէճերու և դժուար յու-
սահատութեան մէջ. մեր մեծատու-
նը զուրուշին վրայ կը դողայ: Վա-
ղը Պաղեստինի մէջ կը վերածնի Իս-
րայէլի ազգը. իսկ մենք կը թողու-
մեր հայրենիքն ու օտար երկիրներու
մէջ նոյն իսկ ընակելու տեղ մը չենք
ունենար: Իսրայէլացի նոյն իսկ զէթ
առայժմ մտցած է իւր յաւիտեան-
կան ակնկալութիւնը, Մէսիայի գա-
լուստը, և հայրենիքի ծնունդին կ'ը-
պասէ:

Իսկ մենք որ այդ տ էր տն ալ
չունինք— թաթէտու առաքեալ աղա-
տեց մեզ անկէ— մենք միակամուս
չենք ճգնիր, չենք գոհեր, որպէս զի
մեր Հայրենիքի տէրը դառնանք:
Թ. Չ.

« Ե Փ Ր Ա Տ » Ի Մ Ա Ս Ի Ն

«Եփրատ» խմբագրութիւնն կը-
խնդրէ ծանուցանել թէ երկու շա-
բաթ առաջ նոյն թերթը «մամուլի
երթած միջոցին փորձանքի մը հան-
դիպելով» կարելի չէ եղած զայն չը-
րատարակել: Խմբագրութիւնն «ը-
պատակ ունենալով որ անոր (Եփրատի)
ծառայի մասին մի քիչ փոփոխութիւն
ընել, այս յարմար առիթ սեպած է
2—3 շաբաթ մի անգամ դադարեցնել
մինչև հարկաւոր պէտքերն ստաց-
ուին»:

Հ. Է.

ՄՈՒՇԵՆՂ (Ս. Հարցի)

Սեպտ. 6, Պոսթըն. Ամերիկայի մեր ազգային թիւ...

Չմշկածագիցի Պ. Ստեփան Յովհաննէսեան (Մուշեղ), երկարատե ու...

Անչուք եղաւ թաղման արարողութիւնը: Հանդէսին վսեմ երեւոյթ մը...

Անոնք որ պատեհութիւն ունեցած են երբեմն հրապարակային ժողովներու...

Հ. Ե. Բ. Ը. ԺՈՂՈՎԸ

Անցեալ շաբաթ երեկոյ տեղի ունեցաւ Երիտասարդաց Գրիտանոնէական...

Մ Ա Ն Բ Ա Լ Ո Ւ Բ Ք

Պ. Կարվանեան, ճաշարանապետ, դրամական դատի մը մէջ դատաւորի...

Պատուական Մարտիրոսեան անուն ուսանայ աղքատ ծերունի մը, չորս ամիս...

Պրէզիդենտ Մորիսիկ Ռէֆուրիքէն լրագիրը երկայն յօդուած մը կը նշուիր...

Մանչեսթըր Կարտիքն (Անգլիա) կը պատմէ թէ Օգոստոս 11-ի երեկոյին...

Պ. Պոյաճեան որ անցեալ Մարտին Նէշուէէն վեց ընկերներով Բըլնայայք...

«Ճամբորդութիւնն Նէշուէէն Պոսթըն երթալու շափ հաճելի եղաւ: Տօսըն քաղաքը...

Տիկին և Տիար Յ. Պ. Եարտըմեանի անդրանիկը մանչ զաւակ մը ծնաւ...

Պոսթընի Կուս Գէլու լրագիրը կըսէ թէ Տոբթ. Թէնտորեան նոյն ընկերութեան...

Սեպ. 7-ի Չորեքշաբթի աւուր սոսկալի փոթորիկին ատեն Կիւլեան եղբարք...

Ուրիշ Պէյ Ըսթէյթ Վուտ Բըմբին ընկերութիւնն, որոյ մէջ մեծ մաս մունի...

Տ. Կ. Յ. Փափագեան անցեալ Ուրբաթ գիշեր քաղաքս եկաւ Պոսթընէն...

Համընտէն մեզ կը գրեն թէ Մաշթոց վարդապետ ամոյս 2-ին հոն հասած...

Պատուական Մարտիրոսեան անուն ուսանայ աղքատ ծերունի մը, չորս ամիս Բարեգործական ընկերութեան...

Պրէզիդենտ Մորիսիկ Ռէֆուրիքէն լրագիրը երկայն յօդուած մը կը նշուիր թէ Օգոստոս 11-ի երեկոյին...

Պ. Պոյաճեան որ անցեալ Մարտին Նէշուէէն վեց ընկերներով Բըլնայայք գնացած էր, Յուլիս 21-թուով հետեաններն կը գրէ...

Բանիցս պատահած է որ մեր ազգային թիւնքին նորածին երակային կրթական օր կեդրոնը բերած են...

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ ՏԻԳՐԻՍԻ

- Պոսթըն — Ղազար Տէր Մանուէլեան Փրօֆիտէնս—Նազարէթ Թաթէնոսեան Լօրէնս...

մնայն վերջ 10 տօլ. տուգանք կը վճարէ ու ազատ կարճակուրի:

Բաղաբիս մէջ դերասանական նոր խումբ մը կազմուեցաւ վերջերս, որոյ նպատակն է...

ԲԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒԻՐԵՐ

(Շարունակութեան Ա. երեսէն) Ենք, և ընկերութիւնը պիտի փորձէ գործանել մեր ցաւերը երբ անոր փայլող լոյսերէն մի քանին սպանուին...

